

245

Կարոսի Տր
պատկերաշար


8


Կ-28


Կ. Պախ
1883

2011

2003







ՓԱՐՈՍ (Ֆիւֆը)

ՓԱՐՈՍԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

معارف عمومیہ نظارت جلیہ سنک رخصتہ
۱۵ شوال ۳۰۰ و ۶ اغستوس ۹۹ نومرو ۴۴۲
مصارف آمریقان مسیونر شرکی طرفندن تسویه اولندرق

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԱՆՆ

1883

ՓԱՐՈՍԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՄԵՐ ԲՆԱԿՈՒԹԵԱՆ ՏԵՂԸ

Ծնած եմ ցամաքէն հեռի կղզւոյ մը փա-
րոսի, այսինքն նաւերու լոյս տուող աշտարա-
կի մը մէջ: Կը պատմուի թէ ծննդեանս օրը
սաստիկ փոթորիկ ելաւ, այնպէս որ շատ շո-
գենաւք և առագաստաւոր նաւք քարերու
զարնուելով պիտի խորաւորուէին, մեր աշտա-
րակն անգամ ի վտանգի էր տապալուելու:
Կղզին ուր էր աշտարակը՝ հեռի էր ցամաքէն
իրը չորս մղոն, և թէպէտ փոքր էր, ունէր
սակայն ընդարձակ տեսարան, այնպէս որ երբ
կղզւոյն մէջ տեղ կը կենայինք, կը տեսնէինք
ծովը մերթ ողորկ և փայլուն իբրեւ ապակի
հանդարտ ժամանակ, և մերթ ծփեալ և տա-
տանեալ յալեաց որ սաստկութեամբ կու գա-
լին բաղխել քարերուն:

Աշտարակը ծովեզերեայ ապառաժի վրայ
շինուած էր, և նաւաւարները զբուշացունե-
լու համար, ամեն գիշեր անոր գլուխը լապ-
տեր կը վառէր: Տղայութեանս ժամանակ այս
լապտերաց երփն երփն լուսէն շատ կ'ախորժէի:
Ու կենալով կը նայէի անոնց ընդ երկար: Հաւս,



38602-67 Զ

52492-4-1.

Սանտի ֆրերկիւսօն, այս աշտարակին երկու տեսուչներէն մին, էր ժիր և սիրուն ծերունի, որոյ պաշտօնն էր ցերեկը լապտերները մաքրել և յարդարել և գիշերը՝ վառել զանոնք։

Երբ պատահեցաւ դէպքը զոր պիտի պատմեմ՝ էի ես հնգետասնամեայ ժիր պատանի, հաւս զիս շատ կը սիրէր, և կը փափաքէր իրեն յաջորդ թողուլ զիս իւր ծերութեան ատենը։

Աշտարակին տեսուչները միայն կը բնակէին կղզին, և երկու ամիսն անգամ մը միայն թոյլ տուեալ էր անոնց քաղաք երթալ, և այն երկու կամ երեք ժամ միայն, մանաւանդ ես շատ քիչ կ'ունենայի քաղաք երթալու բախտը, բայց և այնպէս կղզին մնալ ինծի ձանձրալի չէր։ Մեր տունը որ աշտարակին մէկ կողմն էր՝ ունէր ծովահայեաց պատուհաններ, և կարասիք, ինչպէս անկողին, անօթներ, և ուրիշ կահ և կազմած, որ աշտարակին կը վերաբերէին, և ամենուն վրայ ոսկեզօծ տառերով գրուած էր աշտարակին անունը. կար նաև ուրիշ տուն մը, ուր կը բնակէր քնտանեօք աշտարակին միւս տեսուչը, Միլար անուն։ Այս երկու տանց մէջ կային ջրհոր մը և երկու պարտէզ, որոց մին, որ մերն էր, շատ պտղաբեր էր և կու տար ամէն տեսակ բանջար և ծաղիկ, իսկ միւսը որ մեր դրացւոյն Միլարի էր՝ չէր բարեբեր։ Մենք կը խնամէինք միշտ մեր պար-

տէզը, իսկ մեր դրացին անփոյթ էր խնամելու իրենը։ Պարտէզէն քիչ հեռի փոքր մարդագետնին վրայ կ'արածէին կով մը և երկու այծք։

Աշտարակին մօտ կար հաստառուն նաւամատոյց, ուր ամէն շաբթու կը մօտենար շոգենաւ մը որմէ կը գնէինք ուտելիք և ուրիշ բաներ։ Եւ որովհետև հաւուս աղբականները և մերձաւորները մեռած էին, զրկուած նաւակներուն մեծ մասը կը վերաբերէր Միլարի։ Հայրս իմ ծնանելէս քիչ ժամանակ յառաջ մեկնած էր նաւով և այլ ևս դարձած չէր, ուստի ես տեսած չէի զնա։ Հաւս կը պատմէր թէ հայրս երբ բաժնուեցաւ մօրմէս՝ էր ուժեղ, և «չատ հաւանական է թէ», կ'ըսէր, «ընկղմած էր ծովը», կ'ըսէր նաև թէ մայրս գեղեցիկ էր, բայց այնուհետև նիհարանալով մեռաւ։ Մօրս մահուանէն ետքը հաւս կը խնամէր զիս, և կը սորվեցունէր գրել կարդալ և ուրիշ օգտակար բաներ։ Երբ երկոտասնամեայ եղայ, կարող եղայ աշտարակին վերաբերեալ գործերը կատարել։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԾՈՎՈՒՆ ՎՐԱՅ ԲՈՅ

Օր մը մինչև կէս օր աշտատեցանք պարտէզը, և յետոյ անձրևի պատճառաւ մօտնք

տուն, և երբ երեկոյն սեղան նստելով կը խօսէինք հետեւեալ աւուր դործերուն վրայ, Միլար մեր դրան առջև գալով՝ «Շո՛ւտ, եկէ՛ք նայեցէ՛ք,» աղաղակեց։ Իսկոյն վազեցինք տեսնել, և ահա՛ իբր երկու կամ երեք մըն հեռի ծովուն մէջ բոց մը կը բարձրանար մինչև երկինք։ Բոցը քանի մը վայրկեան լուսաւորելով երկինք, մարեցաւ, և նորէն խաւար եղաւ։

Այս տեսնելով հարցուցի հաւուս թէ ինչ էր այն, և նա պատասխան չտալով ինձ, ըսաւ Միլարի, «Աճապարէ, մի կենար, նաւակը ծով իջեցունենք։» Միլար պատասխանեց, «Այս ահագին ալէկոծութեան դէմ դնել կարո՞ղ ենք։» «Աշխատինք ըստ կարի,» ըսաւ հաւս, և ի միասին նաւամատոյցը գացին։ Ես անոնց ետեւէն երթալով, դարձեալ հարցուցի հաւուս թէ ինչ կար. և նա պատասխանեց, «Վ'երեւի թէ այն տեղ ուր բոցը երեցաւ՝ նաւ մը ինկած է ցամաք, քանզի նաւաւարք սովոր են վտանգի ժամանակ, կրակով նշան տալ օգնութեան համար։» Երբ դարձեալ հարցուցի թէ օգնութեան կերթային, «Այո՛, պիտի երթանք,» ըսաւ, «եթէ կարենանք նաւակը ծով իջեցունել։» Անտոն դարձաւ հարցուց Միլարի թէ պատրաստ էր, և հաճելով որ ես ևս ի միասին երթայի, ամենայն զօրութեամբ աշխատեցաւ նաւակը իջեցունել ծովը։

Այսպէս Միլար և հաւս նաւակը իջեցուցին

ծով, երկուքին կը թիաւարէին և ես ղեկը բռնեցի։ Տիկին Միլար չնայելով փոթորկին, իւր տղայովք նաւամատուցին վրայ կեցած կը դիտէր մերթ բոցը և մերթ մեր ճիգը և աշխատութիւնը. իսկ ծովը տակաւ կը սաստկանար, և նաւակը կը տատանէր յոյժ յալեաց։ Բաւական ժամանակ ծովուն և կատաղի ալեաց դէմ կռուելով ջանացինք յառաջ երթալ, բայց տեսնելով թէ հնար չէր հասնիլ նաւուն որ ի վտանգի էր՝ ստիպուեցանք ետ դառնալ։ Հաւս ըսելով, «Երանի թէ ուրիշ մարդիկ ունենայինք, մինակ չենք կարող երթալ,» դուրս ելաւ նաւէն։ Նաև մենք դուրս ելանք, և կը նայէինք այն կողմը ուր երեցած էր բոցը, բայց խաւարը պատած էր և բոցը դադարած, մեր կողմը միայն աշտարակին կանթեղները կը փայլէին։ Որովհետեւ պահպանութեան կարգը Միլարի էր, նա ելաւ աշտարակը, և մենք մնացինք նաւամատոյցին վրայ։ Ես տխուր և տրտում, չկրցայ լռել, և հարցուցի հաւուս, «Միթէ ուրիշ հնար չկայ։» «Ես ուրիշ հնար չեմ գիտեր, որդեակ,» ըսաւ, «այսպէս կատաղեալ ծովու դէմ ի՞նչ կրնանք ընել, եթէ քիչ մը հանդարտի, դարձեալ կ'աշխատինք։» Երկար ժամանակ սպասեցինք նաւամատոյցին վրայ լռիկ, մինչ յանկարծ նոյն տեղէն դարձեալ բոց մը բարձրացաւ։ Երբ դայս տեսայ, հառաչեցի, բայց ի՞նչ օգուտ, չէի կարող բան

մը ընել : Բոլոր գիշերը սպասեցինք հոն նայելով դէպ այն կողմը ուր երեցած էր բոցը : Մինչև կէս գիշեր նաւէն բոց կ'արձակուէր ատեն ատեն , և այնուհետև դադարեցաւ : Հաւս երբ տեսաւ թէ դադարեցաւ բոցը , ըսաւ , «Թշուառներուն փամփուշտները հատան , կարծեմ սրտառուչ արկած մը պիտի տեսնենք :» Երբ զայս ըսաւ , հարցուցի թէ հոն քարեր կայե՞ն արդեօք ծովուն մէջ : «Այո» ըսաւ , «հոն Այնսլի կոչուած ապառաժը կայ , ուր շատ նաւեր խորտակուած են :» Երբ այդ եղաւ , նաւին կայմերը երեցան , անատեն հաւս ըսաւ , «Այնպէս եղած է ինչպէս ըսի , նաւը զարնուած է Այնսլիի ապառաժին : Հիմա ծովը հանդարտած է քիչ մը , երթանք , թերևս կրնանք մօտենալ նաւին : Գնա կոչէ զՄիլար :» Երբ իմացուցի Միլարի , իսկոյն եկաւ : «Ի՞նչ կ'ըսես ,» ըսաւ հաւս , «կրնա՞նք հովին և ծովուն դէմ երթալ , փորձե՞նք անգամ մը :» Երբ Միլար հաճեցաւ , երեքս միանգամայն մտանք նաւը , և թիավարեցինք բոլոր զօրութեամբ , բայց և այնպէս շատ քիչ կարող եղանք յառաջ երթալ : Այս միջոցին հաւս սկսաւ խրախուսել զմեզ ըսելով , «Եթէ չհասնինք օգնութեան , շատ մարդ պիտի կորսուի , ջանանք , յառաջ երթանք :» Ուստի աւելի մեծ ուժով սկսանք թիավարել , և տակաւ հեռանալով նաւամատուցէն կը մօտենայինք նաւին : Բայց

դեռ բաւական տեղ կար մեր և նաւուն մէջ , և մեր ոյժն սպառելու մօտ էր , ուստի յուսահատ պիտի մնայինք , մինչ յանկարծ վեր ի վայր դարձած նաւակ մը անցաւ մեր քովէն , բայց չկրցանք դիտնալ թէ՛ նաւակը պարա՞պ էր երբ բաժնուեցաւ նաւէն , թէ մարդիկ կային մէջը :

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՏՂԱՅ ՄԸ Կ'ԱԶԱՏԻ

Հաւս ըսելով , « Եղբւկ , թշուառ մարդիկ փութացէք , սիրելիք , ջանանք հասնիլ ,» կ'արժարծէր մեր եռանդը , ուստի և մենք քաջալերեալ , ոյժ տալով թիե՞րուն մօտեցանք նաւին , և տեսանք որ շոգենաւը քարերուն զարնուելով խորտակուած էր , և թէպէտ վերնայարկը դեռ վեր էր ջուրէն , բայց որովհետև ալիքն ուժգին և ստէպ ստէպ կ'անցնէին մէկ կողմէն միւսը , մարդիկը որ նաւին մէջ էին կայմերը բռնելով հազիւ կրնային կենալ : Նաւին մօտեցանք , բայց հովին սաստկութենէն անհնար էր մեր ձայնը լսել տալ , այլ նշանացի կ'իմացունէինք չուան նետել մեր նաւակին : Երբ չուան նետեցին , նաւակը կապեցինք , և հաւս անոնց որ նաւին մէջ էին խրախոյս տալով կ'ըսէր , « Մի՛ վախնաք , զձեզ պիտի ազատենք :» Եւ ինձ պատուիրեց ըսե-

լով, «Երբ ըստ բաւականին մարդիկ կը մանեն նաւակը, կտրէ չուանը:» Ես շատ տրտմեցայ, քանզի նաւին մէջ քանի մի հարիւր անձինք կային, մինչ մեր նաւակն հազիւ կ'առնուր քսան հոգի:

Երբ հովը քիչ մը միջոց տուաւ, յաջողեցանք մօտենալ նաւին այնչափ որ կրնայինք քանի մը մարդ առնուլ նաւակը: Մն ատեն մարդ մը նետեց վերէն ծրարի նման բան մը զոր հաւս առաւ և յանձնեց ինձ ըսելով, «Հող տար ատոր:» Երբ առի ծրարը, տեսայ որ ոչ հանդերձ կար անոր մէջ և ոչ աղամանդեայ զարդ, այլ երեք կամ չորս տարեկան տղայ մը: Մինչ հաւս կը ջանար ուրիշ բաներ առնուլ նաւակը, Միլար ցուցուց ահագին ալիք մը, որ հեռուէն կու գար: Եթէ վայրկեան մը ևս անպատրաստ գտնուէինք, ստուգիւ պիտի տապալէր նաւակը, և պիտի կորսուէինք: Իսկոյն չուանները քակելով քիչ մը ետ քաշուեցանք, և ալիքն եկաւ զարկաւ քարերուն ահագին գոչմամբ: Երբ ալիքը փշրեցաւ, շտապաւ դիմեցինք դէպի նաւը, բայց աւաղ, այն տեղ ուր քանի մը լոպէ առաջ տեսած էինք նաւը, ոչ նաւ կար, ոչ մարդ, և ոչ ինչ անոնց մնացորդներէն, միայն տախտակներու բեկորներ որ կը տատանէին ջուրին երեսը: Նաւն այն ահագին ալեաց բռնութենէն խորտակուած և անյայտ եղած էր բոլոր մարդկամբ: Այնչափ

ՏՐԱԾ ԿՐԸ ԿՐԱՆՈՒԹ



բաղմութենէն կրցանք ազատել տղան միայն
որ մեր նաւակին մէջ էր : Բաւական ժամա-
նակ քարերուն բոլորակքը դառնալով նայե-
ցանք , և բան մը չգտնելով , տրտմութեամբ
դարձանք մեր կղզին : Ի դարձին հովը մեր
ետեւէն էր , և թէպէտ քիչ դժուարութիւն
կրեցինք , բայց շատ յոգնած ըլլալով գրեթէ
ոգեսպառ հասանք նաւամատոյցը : Միւարի
կինը եկած էր դիմաւորել զմեզ , “ Բա՛րէ ,
գո՛չեց , գոնէ հոգի մը կարող չեղա՞ք ազա-
տել : ” Հաւս պատասխանեց , “ Տիկին , բոլոր
զօրութեամբ աշխատեցանք , բայց տղան միայն
հաղիւ կրցանք ազատել : ” Մն ատեն , տիկինը
քակեց ծրարը ուր պատած էր տղան , և ահա՛
գեղեցիկ աղջիկ մը ելաւ դուրս :

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ


ԹԻՄՓԷ

Երբ աղջիկը ծրարէն հանուելով օտար մար-
դիկ տեսաւ , սկսաւ լալ “ Մա՛յր , մա՛յր , ” գո-
չելով : Տիկին Միւար այնպէս ի գութ շարժե-
ցաւ որ չկրցաւ արտասուքը բռնել : Միւար
տեսնելով իւր կնոջ այսպէս խանդաղատիլը ,
սկսաւ մխիթարել զնա : “ Բայց խորհէ անգամ
մը , ” ըսաւ տիկինը , “ եթէ փոխանակ այս աղ-
ջրկան մեր դուստրիկը լար այսպէս ինձ համար ,

դուռն չէի՞ր ցաւեր։” Անատեն հաւս տղան կնոջը ձեռքէն առնելով իմ գիրկս տուաւ, և դառնալով ըսաւ տիկինոյր. “Մէյրի, քիչ մը կերակուր և կրակ բեր մեզ, թերեւս տղան կը մահի և անօթի է։” Տիկինն աճապարեց երթալ, բայց նախ գնաց տեսնել թէ իւր տղաք ի՞նչ պէս էին տունը. աղախինը հոգ կը տանէր անոնց, թէ ոչ, և ապա կերակուր և կրակ բերաւ մեզ։ Ես տղան գրկած կը նստէի կրակին քով, թշուառ աղջիկը յոգնած էր և կը նիրհէր անձայն։ Տիկինը տղին համար բերաւ կաթ և հաց, և տղան քիչ մը ուտելով քնացաւ։ Հաւս ըսաւ. “Տղան քնացաւ, անկողին մը կա՞յ ուր պառկեցունենք։” “Իմ փոքրիկ տղուս անկողինը դնեմ,” ըսաւ տիկինը, և կ’ուղէր տանել, բայց աղջիկը չուղեց երթալ, ուստի տիկինը փոխելով անոր հանգերձները, մեր սենեկի բազմոցին վրայ պառկեցուց։ Այս միջոցին տղան աչքը բանալով ըսաւ, “Թիմֆիէի ձեռքէն բռնէ։” Տիկինը չհասկեցաւ թէ ի՞նչ կ’ըսէր աղջիկը և ի՞նչ անուն կու տար իրեն. ուստի հարցուց ինձ. “Տղան ի՞նչ ըսաւ,” և ես ըսի. “Կ’ըսէ Թիմֆիէի ձեռքէն բռնէ։” “Ի՞նչ, Թիմֆիէ։” — Այո՛, Թիմֆիէ, Թիմֆիէ է արդեօք անունը։” — Ի՞նչ անսովոր անուն է, երբէք չէի ըսած այսպիսի անուն.” և հարցուց աղջկան, “Անունդ ի՞նչ է,” բայց պատասխան չառաւ, քանզի աղջիկը քնացած էր։ Անատեն

սկսաւ տղուն հանգերձները ծալել, ըսելով, “Ի՞նչ գեղեցիկ հանգերձ ունի, կ’երեւի թէ մայրը շատ կը սիրէր զնա, երանի թէ գիտնայինք թէ որու աղջիկ է։ Երբ զայս ըրաւ, անուն տեսաւ հանգերձին վրայ գրուած և “կրնա՞ս կարդալ,” ըսելով ցուցուց ինձ։ Պատահանին մօտ երթալով կարդացի, “Վիլիէրս։” “Ուրեմն,” ըսաւ տիկինը, “Վիլիէրս է հօրը անունը. ավստ՞ս որ հայրը և մայրը ծովերուն տակ պառկած են։” Եւ դարձեալ լալով դնաց իւր աղջկան քով։ Հաւս շատ յոգնած ըլլալով դնաց պառկել, բայց ես տղան հսկելու համար մնացի անոր քով։ Մինչ բազմոցի վրայ նստած կը խորհէի տղուն թշուառութեան վրայ, քնացայ, քանզի նախընթաց գիշերը քնացած չէինք։ Քանի մը ժամ ետքը արթնցայ, և տեսայ որ աղջիկն արթուն էր, և ըսաւ ինձ, “Ե՛լ, ե՛լ, մուճակներս հագցու։” Այն միջոցին Միլարի կինը ներս մտաւ, և երբ տեսաւ աղջիկն արթուն, գնաց կերակուր բերաւ և կ’ուղէր անոր կերցունել, բայց տղան ըսաւ, “Դե՛ղալը Թիմֆիէի տուր։” Տիկինը զարմանալով այս նոր և գեղեցիկ անուան վրայ զոր տղան կու տար իրեն, դե՛ղալը տուաւ անոր։ Ամէն անգամ որ այս ազնիւ կինը կը նայէր տղուն երեսը, ևս քան զևս կ’աւելնար անոր գութը տղուն վրայ և կ’ըսէր. “Թիմֆիէ, Աստուած օրհնէ զքեզ,” և երբ աղջկան բերնէն լսեց, “Զքեզ

ևս օրհնէ,” «Անտարակոյս», ըսաւ, «մօրմէն սորված է այսպէս պատասխանել», և յարտօսար շարժելով, դնաց միւս սենեակը, տղուն չիմացունելու համար արտասուելը, և ես աղջիկը տարի պարտէզ, ուր ոգի առնելով սկսաւ ոստոստել և խաղալ, ծաղիկներ քաղելով կուտար ինձ և կ'ուրախանար. բայց ես նայելով ծովուն որ դեռ կը ծփար, Այնպիսի ապառաւ ժին կողմը կը դարձունէի աչքս, և կը գործվէի, քանզի խորտակեալ նաւը մտքէս չէր ելլէր, մանաւանդ երբ կը խորհէի թէ թիմփէի մայրը ծովուն յատակն էր:



ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՇՏԱՐԱԿԻՆ ԱՆՏԷՐ ՎԱՐԴԸ

Գիշեր մը մինչ հաւս և Միլար կրակին մօտ նստած էին, և ես գիրքի մը պատկերները կը ցուցնէի թիմփէի, Միլար հարցուց հաւուս.

— «Հիմա, Սանտի, ի՞նչ ընենք այս տղան?»

— «Պահենք մեր քով»

— «Լաւ ևս կ'ընենք եթէ տղուն աղբականները փնտռենք»

— «Ի՞նչպէս փնտռենք»

— «Նամակ մը գրենք ընկղմեալ նաւուն ընկերութեան տնօրէնին, որ այն նաւորդաց աւուսներուն ցուցակը քննելով թերեւս գտնէ տղուն հօրը անունը»

— «Շատ աղէկ, գրենք նամակ մը, և սպասենք պատասխանին, բայց որովհետեւ տղուն հայրը և մայրը մեռած են, պէտք չէ որ տղան ուրիշի յանձնենք»

— «Եթէ մեր տունը շատ տղաք չըլլային, ես կ'առնուի և կը սնուցանէի զնա»

— «Գիտեմ, դուք շատ տղաք ունիք, բայց մեր տունը տեղ կայ, և թիմփէ կ'զբօսցունէ զմեզ, թող տիկինդ հոգայ անոր հանդերձները»

— «Այո՛, տիկինս կը հոգայ, շատ կը սիրէ տղան, գրեթէ բոլոր օրը կուլայ անոր համար»

Հաւս ըստ խրատող Միլարի, երկուշաբթի օրը երբ շոգենաւն եկաւ, նաւապետին պատմեց նաւուն արկածը և տղուն ազատումը, և հարցուց ընկերութեան տնօրէնին անունը և անոր հասցէն: Մեր սէրը տակաւ կ'աւելնար թիմփէի վերայ: Թիմփէ ամէն երեկոյ երբ անկողին կը մտնէր՝ կ'աղօթէր, և թէպէտ լեղուն դեռ յստակ չէր, աղօթքին խօսքերը կը հասկցուէին: Այս էր աղօթքը, «Ով Յիսուս, դու ես բարերար Հովիւս, օրհնէ գառնուկդ, այս գիշեր ներկայ եղիր և պաշտպանէ զիս»

Ես սիրեցի այս աղօթքը, բայց որովհետեւ հաւս սորվեցուցած չէր ինձ աղօթել, չէի գիտեր աղօթք ընել: Երբեմն կը խորհէի թէ մայրս, եթէ ողջ ըլլար, կը սորվեցունէր ինձ աղօթք

ընել: Սուրբ գրոյ վրայ ևս տեղեկութիւն չունէի, քանզի հաւս թէ և ունէր Սուրբ գիրք, չէր կարդար զայն, և կիրակին սուրբ չէր պահէր, այլ ընդհանրապէս պտըտել կ'երթար, կամ լրագիր կը կարդար: Հիմա շատ անգամ կը խորհիմ թէ այն ահաւոր գիշերը եթէ մեր նաւակը կորսուէր և մենք ընկրմէինք, ի՞նչ պիտի ըլլայինք: Արքայութեան դուռները մեզի ո՞վ պիտի բանար: Մինչ հոն մանելու դուռը օրհուս միայն է, մենք անոր վրայ բռնաւ տեղեկութիւն չունէինք: Բայց թիմիւ երթալով ընտանեցաւ մեզ, այնպէս որ եթէ ազգականները գտնուէին ևս, պիտի չուրախանայինք: Անձրեային օր մը եկաւ նաւին ընկերութեան տնօրէնէն մեր նամակին պատասխանը: Տնօրէնը կ'իմացունէր թէ, կորուսեալ նաւը ազատելու համար մեր աշխատութենէն գոհ էր, բայց թէ տղուն կամ անոր ազգականաց վրայ տեղեկութիւն չունէր, կ'ըսէր մանաւանդ թէ նաւուն մէջ վիլիէրս առնուն մարդ չկար, բայց դեռ քննութիւն պիտի ըլլար, կը խոստանար նաեւ հատուցում մը ընել մեզ: Նամակին լուրը զմեզ գոհ ըրաւ, քանզի տեսանք որ գոնէ մինչև ցնոր տեղեկութիւն թիմիւ մեր քով պիտի մնար: Հաւս ըսաւ, «Մենք հատուցում ի՞նչ պիտի ընենք. թիմիւ մեծ հատուցում է մեզ»: Եւ թողուց զնաց աշտարակը իւր պաշտօնին:

ԳԼՈՒԽ ՎԵՅԵՐՈՐԴ

ԾԵՐՈՒՆԻ ՀԻՒՐԸ ԵՒ ԱՆՈՐ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ

Երկուշաբթի օր թիմիւն հետ նաւամատոյցը դացինք սպասել չողենաւին գալստեան: Երբ չողենաւն հասաւ, նաւապետին կողմանէ մարդ մը եկաւ և իմացուց ինձ թէ երկու անձինք կ'ուզէին տեսնուիլ հաւուս հետ: Եկողներէն մին էր ծանրաբարոյ ծերունի մը, միւսը՝ միջահասակ: Ծերունին թիմիւն նայելով, անոր և հաւուս վրայ բաւական հարցումներ ընելէն ետքը աշտարակը մտաւ: Ես հիւրերուն կերակուր պատրաստելու զբաղած էի, բայց անոնց քանի մը խօսքէն հասկցայ որ, եկած էին խորտակեալ նաւուն գէպքը ստուգել, և բանը հասկնալով հաւէս, կ'ուզէին հատուցում ընել անոր, բայց հաւս չէր ուզեր բան մը ընդունել: Թիմիւն վրայ նոր տեղեկութիւն մը չտուին, միայն առաջարկեցին որ թիմիւն յանձնուէր ընկերութեան գործակալութեան, բայց հաւս անոնց այս առաջարկութեան ևս չհաճելով, խնդրեց որ թոյլ տրուէր մեզ ազգիկը մեր քով պահել, և նոքա տեսնելով թէ ազգիկը հանգիստ կը վայելէր մեր քով հաճութիւն առին: Ճաշէն ետքը միջահասակ հիւրը հաւուս հետ գնաց տեսնել աշտարակը, իսկ ծերունին մնաց մեր քով:

—“Այս տունը շատ հաստատուն կ'երևի,”
ըսաւ :

—“Այո՛, տէր,” ըսի, “հոս հովերը սաստիկ
են, պէտք է որ տունը հաստատուն ըլլայ :”

—“Ի՞նչպէս, հիմը հաստա՞տ է :”

—“Այո՛, քանդի վիմի վրայ է : Եթէ տունը
և աշտարակը վիմի հաստատուած չըլլային,
կրնայի՞ն դէմ դնել փոթորիկներուն :”

—“Դու ևս հաստատուա՞ծ ես վիմի վրայ :”

—“Ի՞նչ ըսել կ'ուզէք, տէր :”

—“Դու ևս, կ'ըսեմ, վիմի վրայ կեցա՞ծ ես :”

—“Անտարակոյս, մինչ մեր տունը և աշտա-
րակը վիմի վրայ են, ի հարկէ ես ևս վիմի
վրայ չե՞մ :”

—“Շէնքի համար չեմ հարցուներ, դու յա-
ւիտենական վիմին վրայ հաստատուա՞ծ ես :”

—“Ճշմարիտ կ'ըսեմ ես ձեր խօսքը չկրցայ
հասկնալ :”

—“Հոգ չէ, երբ հաւդ դայ, անոր կը հար-
ցունեմ :” Այս միջոցին հաւս եկաւ, և մեր
ծերունի հիւրը նոյն հարցումները զորս ըրած
էր ինձ, ըրաւ նաև հաւուս, բայց երբ նաև
հաւս նոյն պատասխանները տուաւ զոր ես
տուած էի, իրենց խօսքը յառաջ տարին սա
կերպով :

—“Դու վիմի վրայ հաստատուա՞ծ ես, և
քանի՞ տարիէ հետէ :”

—“Տէր իմ, կ'ուզէք դիտնալ թէ քանի՞ տա-

րի է որ հոս կը բնակիմ. իբր քառասուն տա-
րի է :”

—“Տակաւին քանի՞ տարի պիտի կենաս հոս :”

—“Թերեւս մինչև ցմահ : Մեռնելէս ետքը,
իմ թոռս, Ալիք պիտի յաջորդէ ինձ : Ալիք
բարի և ժիր պատանի է :”

—“Բայց ասկէ մեկնելէդ ետքը ո՞ւր պիտի
բնակիս :”

—“Մինչև ցմահ այս կղզին թողելու միտք
չունիմ :”

—“Իսկ մահուանէդ ետքը ո՞ւր պիտի եր-
թաս, կը հարցունեմ :”

—“Չեմ գիտեր, տէր իմ, կը յուսամ թէ
արքայութիւն պիտի երթամ : Բայց դեռ մահը
հասած չէ որ ատոր վրայ խորհիմ :”

—“Եթէ չես վշտանար, հարցում մը ևս
ընեմ. Արքայութիւն երթալու յուսոյդ հիմն
ի՞նչ է, որո՞ւ ապաւինած ես :”

—“Որո՞ւ պիտի ապաւինիմ, ինչպէս գիտէք
Աստուած ողորմած է. և որովհետև չարագործ
չեմ կը յուսամ թէ վախճանս աղէկ պիտի
ըլլայ :”

—“Բարեկամ, եթէ յուսոյդ հիմն այս է,
պարապ և անօգուտ է, յուսոյդ հիմը վե՞մ
չէ, այլ աւաղ :” . . .

Այս միջոցին լուր եկաւ թէ յողենաւը կ'ել-
էր, ուստի ծերունի հիւրը վերջացուց խօսքը,
սա միայն ըսաւ հաւուս թէ “Թող աւաղի”



վրայ է, փոթորկի դէմ կարող չես դնել,” և ինձ թուղթ մը տալով որոյ վրայ քանի մը խօսք գրուած էր գնաց շողեհաւ: Նաւամա-տոյցը կենալով դիտեցի նաւուն երթալը, յետոյ տոմար ձեռքս դացի աշտարակ Միլարի և հաւուս քով:

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Մէջ եի ՄԱՌԱՍԻՈՒԴ

Այն իրիկուն երեքս ի միասին նստած՝ մինչ հիւրերուն խօսքին վրայ կը խորհէինք, հաւս ըսաւ. «Ծերունի հիւրը վիմի վրայ ի՞նչ կ'ըսէր, չհասկցայ Միլար, դուն բան մը հասկըցա՞ր»: Մինչ Միլար կը խորհէր այս հարցման վրայ, ցուցուցի հաւուս թուղթը զոր ծերունին տուած էր ինձ: Հաւս ըսաւ, «Տեսնեմ ի՞նչ գրուած է,” և առաւ կարդաց,

«Ի վերայ Յիսուսի յեցեալ է”

«Հաւատքս և յոյսս.”

«Աւագք ցրուեալ կորնչին,”

«Վէմն կը մնայ հաստատուն:”

— «Ի՞նչ կ'ըսես, բարեկամ, ի՞նչ ըսել է այս: Եւ մինչ կ'երթար ծերունին, սա խօսքը ըսաւ ինձ. «Յոյսդ աւագի վրայ է, փոթորկի չես դիմանար: Այս խօսքէն ի՞նչ կրնանք հասկընալ:”

— «Ես անոր միտքը հասկցայ, և շատ աղէկ հասկցայ: Խորհելու արժանի խօսքեր են:”

— «Ի՞նչ հասկցար, ըսէ տեսնենք:”

— «Վ'ուզէր ըսել թէ, եթէ Գրիատոսի չհաւատանք, չենք կարող մտնել յարքայութիւն: Նա է միակ ճանապարհ, չկայ ուրիշ:”

— «Եթէ ես ըստ կարի աշխատիմ, և ընեմ ինչ բարիք որ կրնամ ընել, չե՞մ կրնար երթալ յարքայութիւն:”

— «Ոչ, արքայութիւն տանող ճամբան մի միայն է. և ես զայն աղէկ դիտեմ:”

— «Մինչև ցարդ այսպիսի խօսք մը լսած չէի քեզ:”

— «Այո, քանզի յորմէ հետէ հոս եմ, այս ճշմարտութեան վրայ անփոյթ էի, բարեպաշտ մայրս կը սորվեցունէր ինձ մանկութեանս ժամանակ փրկութեան ճամբան. աւագ որ շատ բան մոռցած եմ:”

Հոս վերջացուցին խօսքը, Միլար սկսաւ խորհիլ, հաւս լրագիր կարդաց, և այսպէս անցաւ ժամանակը:

Հետեւեալ օրը կարգը Միլարի էր քաղաք երթալ, և ես անոր հետ դացի մինչև նաւամատոյցը: Երբ նաւ կը մտնէր, «Ալիք,” ըսաւ, «աղէկ պահէ թուղթը զոր ծերունին տուաւ քեզ, քանզի անոր մէջ բոլոր գրուածը ճշմարիտ է: Ես այս գիշեր շատ խորհեցայ, նաև աղօթք ըրի, և հիմա յոյս ունիմ որ, այն

յաւիտենական վիմլին վրայ հաստատուած եմ.
մնաս բարեաւ:” Այս ըսելով մեկնեցաւ: Մեր
խօսքը յառաջ տանելու ժամանակ չկար, բայց
ես նաւամատուցին վրայ կեցայ, և մինչ կը
դիտէի նաւը որ ցամաքէն կը հեռանար, լը-
սեցի որ Միլար կ’երգէր,

“Դ վերայ Յիսուսի յեցեալ է”

“Հաւատքս և յոյսս,”

“Աւագը ցրուեալ կորնչին,”

“Վէմն հաստատ կը մնայ:”

Այնուհետեւ ես եկայ աշտարակը, և կը սպա-
սէի Միլարի քաղաքէն դառնալուն: Կէս օրին
թանձր մառախուղ ծովը ամէն կողմէն պա-
տեց, այնպէս որ կարող չէինք բնաւ բան մը
տեսնել: Թիմիէ որ դուրսը ցուրտին դէմ
կը կենար՝ սկսաւ հաղալ, ուստի ներս տարի
դնա: Հաւս աշտարակին կանթեղները վառած
էր, բայց մառախուղին պատճառաւ դուրս չէր
տեսնուէր: Գիշերը մօտ էր, և ամէն կողմ
խոր խաւար, սակայն Միլար դեռ եկած չէր,
և հաւս ըսաւ, “Միլար մինչև ցարդ գալու
էր,” և ես ըսի, “Մինչև ճաշէն ետքը թերեւ
կու գայ, արդեօք ինձ բան մը կը բերէ:” Այն
ինչ սեղանէն ելած էինք, Միլարի տիկինը ժա-
մացոյցը ձեռքը ներս մտաւ, և ամուսնոյն ու-
շանալուն համար շատ մեծ հոգ ընելը հասկը-
ցուց: Հաւս՝ “Նաւամատուցը երթամ նայիմ,

հոգ մի՛ ըներ, ժամը եօթնին կու գայ,” ըսաւ
և դնաց նաւամատուցը: Տիկինը կը կենար կը
կենար դրան կը նայէր, բայց եկող մը չեղաւ:
Ժամը վեց եղաւ (ըստ Եւրոպականի), վեցը
քառորդ անցաւ, վեց ու կէս եղաւ, եօթնին
քառորդ մնաց, և վերջապէս եօթն եղաւ,
սակայն մարդ երեւան չեղաւ:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՄԻԼԱՐԻ ԴԱՐՁԸ ԿՄՊԱՍՈՒԻ

Տիկին Միլար՝ որովհետեւ միտքը շատ ան-
հանգիստ էր, չկրցաւ կենալ, ելաւ նաւամա-
տուց դնաց, թիմիէի հետ ես տունը մնացինք:
Երբ ժամը եօթնուկէս եղաւ, և ես այլ ևս
չկրցայ համբերել, զթիմիէ Միլարի սպասու-
հւոյն քով դրի և դէպ ի նաւամատուցը վա-
զեցի: Երբ հոն հասայ, լսեցի որ հաւս Մի-
լարի կնոջ կ’ըսէր. “Մէյրի, հոգ մի՛ ըներ,
կու գայ, կ’երևի թէ մէզին փարատելուն կը
սպասէ: Հոս մնալով կը մնիս և հիւանդ կ’ըլ-
լաս, դնա՛ տուն. երբ Միլար գայ, քեզի լուր
կու տամ:” Տիկինը՝ դեղնած և անձրևէն թըր-
շած էր և սաստիկ կը մտէր, բայց և այնպէս
նաւամատուցէն մեկնիլ չէր ուզեր, բայց երբ
մութը աւելցաւ, ցուրտը սաստկացաւ, ստիպ-
ուեցաւ տուն երթալ: Անատեն հաւս քովս

դալով, «Սւլիք»,» ըսաւ, «Միլարի համար մեծ տաղնապի մէջ եմ, դուցէ վտանգի հանդիպած է՝» Չուղեցի կնոջը բան մը ըսել, սակայն շատ կը կասկածիմ: Եթէ նաւակը հոս ըլլար, կ'երթայի փնտռել:» Այս ըսելով նաւամատուցին վրայ կը ճեմէր, միայն երբեմն կը կենար միտ դնելու թէ արդեօք թիերու ձայն կը լսէր, երբեմն ևս հառաչելով կ'ըսէր, «Ինչո՞ւ չեկաւ:» Այսպէս դիշերուան առաջին մասն անցաւ: Մինչ մութը կեցած կը սպասէի, երբեմն միտքս կու գար այն աւուր զուարթ և երջանիկ առաւօտը և Միլարի երգելով մեկնելը: Սնգամ մը սպասուհին եկաւ և ըսաւ, «Տիկինը հոգէն գրեթէ հիւանդ է, լուր մը կայ:» և լուր չառնելով դնաց: Թէև մութը սաստիկ էր, ծոփն և օդը հանդարտ էին, եթէ նաւակ դար, թիոց ձայնը կը լսուէր: Մինչ մենք այս յուսով կը սպասէինք, յանկարծ թիոց ձայն լսեցինք: Ես ուրախութենէս չկըրնալով կենալ, ուղեցի երթալ տիկնոջ աւետիս տալ, սակայն հաւս չթողուց ըսելով թէ՝ թերեւս ուրիշ է եկողը: Նաւը մօտեցաւ, հաւս ըսաւ, «Ո՞վ է այն, Միլար դո՞ւ ես, ինչո՞ւ ուշացար, այս կողմը եկու», սակայն ձայն տուող չեղաւ: Դարձեալ ըսաւ, «Ո՞վ է այն, քեզի կ'ըսեմ, ո՞վ է այն», և ձայն մը եկաւ, բայց Միլարի ձայնը չէր: Քիչ մը ետքը դարձեալ ձայն լսեցինք, որ կը հարցունէր. «Նա-



ՄԻԼԱՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԲԵՐՈՒՄԸ

ւամատոյցը ո՞ր կողմն է” ես՝ “Այս Միլարի
 ձայնը չէ, արդեօք անոր ինչ պատահած է,”
 ըսի։ Հաւս՝ “Սնչուչտ բան մը եղած է,” ըսաւ։
 Նաւակը մօտեցաւ նաւամատուցին չորս հոգւով,
 զՄիլար հարցուցինք, նաւավարը պատասխա-
 նեց “Բերինք զնա։” Այս միջոցին տեսայ որ
 Միլար պառկած էր նաւին մէջ, ես իսկոյն՝
 “Սւա՛ղ, վտանգի մի հանդիպած է,” գոչեցի։
 Նաւավարը պատասխանեց, “Մեռած է։”
 Հաւս, “Սւա՛ղ, գօչեց, հիմա այս դոյժը անոր
 թշուառ կնոջը ի՞նչպէս տանք։” Յետոյ հար-
 ցուց նաւավարին, “Ինչէ՞ն մեռաւ,” նա պա-
 տասխանեց “Շուկայէն ալիւր առած նաւա-
 մատոյց կու գար, և մինչ բեռը նաւակը կը
 դնէր, ոտքը սահեցաւ և ծովը ինկաւ։ Որով-
 հետեւ լողալ չէր գիտեր, հօն գտնուող մար-
 դիկ աշխատեցան ազատել զնա, բայց դիակը
 կրցան հանել։” “Հիմա,” ըսաւ, “մեռելը
 ներս բերե՞նք։” Հաւս հառաչելով, գնաց
 տիկնոջը խմացունել, և քիչ մը ետքը եկաւ,
 “Խմացուցի,” ըսաւ, “ննջեցեալը ներս բերէք,”
 և առինք տուն տարինք։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Այն գիշերը որ ննջեցեալը տուն բերուե-
 ցաւ, Միլարի կինը տենդէ բռնուած բաւա-

կան ծանր հիւանդ պառկեցաւ . և մենք ըստիպուեցանք բոլոր գիշերը թէ հիւանդը թէ աշտարակը պահպանել, և այսպէս քնհատ մնացինք : Ննջեցեալը բերող նաւավարին ապսպւրած էինք . քաղաքէն բժիշկ ղրկել, ուստի և յաջորդ առաւօտուն բժիշկ մը և հիւանդ նայող մը եկան քաղաքէն, ուստի ես և հաւս առանձնացանք մեր սենեակը, ուր հաւս սկսաւ վշտաղնեալ սրտիւ այսպէս խօսիլ . « Ալիք, այս մահուան դէպքը մեծ ազդեցութիւն ըրաւ ինձ : Եթէ ես մեռած ըլլայի, արդեօք հիմա ո՞ւր պիտի գտնուէի : Միլար հիմա ո՞ւր է արդեօք : Այն վայրկենէն որ ննջեցեալը տեսայ նաւուն մէջ, սիրտս հանդարտ չէ : Միտքս միշտ սա խնդրով զբաղած է . « Հիմա Միլար ո՞ւր է : » Եւ ես պատմեցի հաւուս խօսակցութիւնը որ իմ և Միլարի մէջտեղ եղաւ, երբ Միլար կը մեկնէր կղզիէն : Հաւս հարցուց ,

— « Բերդի ըսաւ թէ վիմին վրայ հաստատուած էր : »

— « Այո՛, ըսա՛ւ թէ յաւիտենական վիմին ապաստանած էր : »

« Երանի՛ » թէ և ես այն յաւիտենական վիմին ապաստանած ըլլայի : »

— « Ի՛նչ արդեւք կայ, և մենք չե՞նք կարող Միլարի պէս ընել : »

— « Այն ծերունի հիւրին խօսքը հիմա կը հասկնամ : Նա ըսաւ ինձ, Դուռն աւազի վրայ

եւ, փոթորկի չես դիմանար : » Բայց վիմի վրայ ի՛նչպէս կրնայ մարդ հաստատուիլ, չեմ հասկընար : »

Տիկնոջ հիւանդութիւնը քանի մը շաբաթ տևեց, և այնչափ յառաջ գնաց որ բժիշկը գրեթէ յուսահատ էր անոր առողջութենէն, բայց և այնպէս առողջացաւ տիկինը : Քանի մը օր ետքը լուր առինք թէ Միլարի յաջորդ մը կարգուած էր, ուստի տիկինը կարասիները ժողվեց, ամէն բան կարգի դրաւ, սգոյ հանդերձ հաղաւ, նաև տղոցը հաղցուց, և մեկնելով կղզիէն գնաց քաղաք իւր հօրը տունը : Մինչև նաւամատոյցը երթալով յուղարկեցինք զնա, և երբ տուն դարձանք, կղզին իբրև մթին բանտ կը թուէր մեզ : Մեր մի միայն միտքարութիւնն էր թիմիէ, որ կը զարգանար ոչ միայն մարմնով և մտք, այլ և շնորհօք և գեղեցկութեամբ : Այն անձին վրայ որ պիտի դար փոխանակ Միլարի տեղեկութիւն առնուլ կը փափաքէինք, բայց ստոյգ լուր մը չկրցանք առնուլ : Անձկութեան մէջ էինք թէ ո՞վ և ինչպիսի մարդ էր որ պիտի դար, առանձին էր թէ ընտանեօք, ինչո՞ւ համար չեկաւ անգամ մը տեսնել պաշտօնը որ կը տրուէր անոր . գոհ պիտի ըլլա՞ր տունէն և աշտարակին պահապանութենէն : Երբ իմացանք անոր գալստեան օրը, հաւս ըսաւ ինձ, « Որպէս զի օտարութիւնը ծանր չթուի

անոր , աղէկ կերակուրներ պատրաստէ , և երբ շողենաւը կու գայ , իսկոյն երթանք դիմաւորել զնա , և մեծարանօք ընդունինք :” Ուստի ամէն ջանք ըրի աղէկ ընդունելութիւն ընելու համար :


ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՆՈՐ ԸՆԿԵՐԸ

Այն օր որ մեր նոր ընկերը պիտի գար , առաւօտուն չորս կամ հինգ հոգւոյ համար բաւական կերակուր պատրաստեցինք , ծաղիկներով զարդարեցինք սեղանը , և ապա նաւամատոյց գացինք դիմաւորել զնա : Երբ շողենան մօտեցաւ կղզւոյն , նաւին վրայ մարդ մը տեսանք որ նաւապետին հետ կը խօսէր , բայց տրտմեցանք վասն զի անոր հետ ընտանիք չտեսանք : Շողենան մօտեցաւ նաւամատուցին , և նաւապետը դուրս ելլելով , երկայնահասակ մարդ մը ցցուց հաւուս . “Ահաւասիկ ,” ըսաւ , “ձեր նոր ընկերը , ցուցուցէք անոր բնակարանը :” Ան ատեն հաւս , ըսաւ այն մարդուն , “Բարով եկաք , բարեկամ ,” և ձեռքէն բռնեց . և նա ըսաւ , “Բարով տեսանք , չնորհակալ եմ :” Յետոյ հաւս ձեռքը ուսիս վրայ դնելով ըսաւ անոր , “Այս իմ թոռն է .” և նա մտադրութեամբ երեսս նա-

յելով , ըսաւ , “Այդպէս է , ձեր թոռն է :” Յետոյ հաւս առաւ զնա , և տուն կը տանէր : Իսկ նա ըսաւ , “Մեծ չնորհք կը համարիմ որ զիս այսպէս սիրով ընդունեցաք , և շատ չնորհակալ եմ :” Այսպէս կ'երթային դէպ ի տուն , և երբ կ'անցնէինք պարտէզէն մարդուն աշուրներէն արտասուք կը հոսէին , ես տեսայ զայս , բայց պատճառը չկրցայ հասկնալ : Երբ սեղանն ստանք , հաւս ըսաւ անոր , “Բարեկամ , մենք դեռ չենք դիտեր ձեր անունը :” Մարդը քիչ մը լուռ կեցաւ , ապա հաւուս ձեռքը բռնելով ըսաւ , “Հայր , ձեր որդին չէ՞ք ճանչնար :” Հաւս երբ այս լսեց , գոչեց , “Դաւիթ , որդեակ իմ Դաւիթ . տես Ալիք , տես , հայրդ է ,” և իսկոյն ինկաւ որդւոյն պարանոցին վրայ : Քիչմը ատեն այսպէս մնալէն ետքը , հայրս պատմեց թէ ինչպէս ճամբորդութենէն դառնալէն ետքը , խնդրեց և առաւ աշտարակի պահանորդութեան պաշտօնը : Եւ հաւս պատմեց մօրս մահը , որ յառաջ եկած էր անոր տկարութեան տակաւ աւելնալէն : Կը մնար մեզ հասկնալ թէ այնչափ տարիներ հայրս , ուր էր , և ի՞նչ բաներ պատահած էին անոր : Այս բաները պատմելու յարմարագոյն ժամանակն է գիշերը , ուստի յետ ընթրեաց երբ վառարանին մօտ նստած էինք , հայրս սկսաւ պատմել թէ կղզիէն մեկնելէն ետքը ուր գացած էր , և ինչ բաներ պատահած էին անոր : “Լիվըրփուլէ

մեկնեցանք,” ըսաւ , “ և ովկիանոսն անցնելով, հասանք Չինաստանու եղերքը , ուր մեր նաւը սաստիկ ալեկոծութեան հանդիպելով խորտակուեցաւ , և մենք մեծ դժուարութեամբ յաջողեցանք ցամաք ելլել : Երբ ցամաք ելանք , Չինացիք զմեզ գերի ըրին , և տարին կառավարութեան քով : Եւ որովհետեւ ոչ Չինացիք մեր լեզուն կը հասկնային և ոչ մենք անոնց լեզուն , կարող չեղանք իրարու խօսք հասկնալ : Քանի մը օր սպասեցինք տեսնել թէ ինչ որոշում պիտի ընեն մեզի համար , և յանկարծ բանտէն հանուեցանք , և զրկուեցանք երկրին ներսի կողմերը իբր երկու շաբթուան ճամբայ : Ահա՛, այս կերպով տասնեմէկ տարի գերութեան մէջ մնացի : Իմ տէրս թէև զիս շատ չէր նեղեր , սակայն միշտ իւր գործոց մէջ կ’աշխատցունէր , և գիշեր ցերեկ կը հսկէր որ պատեհութիւն գտնելով չփախչէի և կամ լուր ղրկէի հայրենիք : Ուստի կարող չեղայ լուր առնուլ իմ երկրէս , և ոչ վիճակս իմացնել ձեզ : Այս տասնեմէկ տարին դառնութեամբ անցուցի . վերջապէս , տէրութիւն մը Չինացւոց հետ պատերազմ բացաւ և յաղթող եղաւ , և խաղաղութեան դաշնագրին պայմաններէն մին էր Չինաստանու մէջ գտնուած օտարական գերիներուն ազատութիւնը : Օր մը , մինչ գերութենէ ազատելու բոլորովին անյոյս էի , ազատութեան



ՇՈԳԵՆԱԻՆ ԳԱԼՈՒՆ ԿԸ ՍՊԱՍՈՒԻ

հրամանն ընկալայ, և հայրենիքս դարձայ:”
Հոս հաւս ուրախութենէն գոչեց, “Իբրեւ թէ
երազէ արթնցած եմ, և զքեզ իբրեւ յարու-
թիւն առած կը համարիմ:”

ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՎԻՄԻ ՎՐԱՅ ՀԱՍՏԱՏՈՒԻԼ

Տասն և հինգ օր ետքը մինչ հաւս, թիմիէ
և ես նաւամատոյցը կը սպասէինք տեսնել թէ
ինչ կը բերէր շողենաւը մեր կղզին, Տէյլիս
ծերունի հիւրը որ առաջ մեր կղզին եկած էր
շողենաւէն ելաւ: Այն անձը թիմիէի վերա-
բերեալ նամակ մը կը բերէր մեզ: Հաւս դի-
մաւորեց զնա ըսելով “Բարի եկիք, տէր:”
Եւ նա ըսաւ “Բարի տեսանք. գիտէ՞ք ինչու
համար եկայ:” Հաւս ըսաւ “Տէր, արդեօք
մեր վարդը մենէ առնելո՞ւ եկաք:” Ծերունին,
“Այեցի,” ըսաւ, “սա նամակը կարդամ,” և
սկսաւ կարդալ:

“Պոմպէյ. Մայիս 18,

Մեծապատիւ Տէր,

Ձեմ կրնար պատմել թէ ինչ մեծ ուրա-
խութիւն տուաւ մեզ Ձեր նամակը. Հնորհա-
կալ ենք մեծապէս: Այն վայրկենէն որ առինք

ընկղմեալ նաւուն լուրը, մեծ տրտմութեան մէջ էինք մեր դատեր համար: Բայց իմանալով Ձեր նամակէն թէ թիմիէ ողջ առողջ է, շատ ուրախ եղանք: Այս շաբթու շողեհաւով պիտի գանք Անգղիա: Որովհետեւ այս տեղի օդն աղէկ չէ, մեր սիրելի դատրիկը իւր ըստընառլին հետ առաջ ղրկած էինք հաւուն: Այս հաւատարիմ կինը զոհած է իւր կեանքը իրեն յանձնուած աւանդը պահելու: Իմ կողմանէս շնորհակալ եղէք անոնց որ դատրիկս ազատած են և կը պահեն:

Ողջ լերուք

Մեծապատիւ Տէր
ԷՏՎԱՐԴ ՎԻԼԻԵՐՍՊ

Տէյլիս նամակը կարդալէն ետքը, հաւուս նայելով և ժպտելով ըսաւ, «Հիմա, կու տա՞ք աղջիկը:» Հաւս պատասխանեց. «Անշուշտ կու տանք, ով գիտէ որչափ ուրախացած են ծընողքը:» Ես դարձայ և ըսի աղջկան, «Թիմֆէ, թիմֆէ, մայրդ կու գայ:» Աղջիկը ցընծալով գոչեց, «Սիրելի մայրիկս, իւր թիմֆէն տեսնե՞լ կու գայ:» Տէյլիս ըսաւ. «Աղջիկս, Տէրը օրհնէ դքեզ», և հաւուս հետ խօսելով եկաւ տուն: Ես թիմֆէի հետ ետեւէն երթալով մտիկ կ'ընէի անոնց խօսքը: Տէյլիս ըսաւ հաւուս, «Բարեկամ, խորհեցա՞ք այն խօսքին վրայ զոր անցեալ անգամ ըսի ձեզ:»

—«Այո՛, տէր, շատ խորհեցայ: Հիմա կը

տեսնեմ որ աւազի վրայ կեցած եմ, բայց ի՞նչպէս պիտի գտնեմ վէմը, և ի՞նչպէս պիտի հաստատուիմ անոր վրայ, այս է զոր չեմ գիտեր: Եթէ փոթորիկ մը պատահի, ի՞նչ պիտի ըլլամ:»

—«Մտուղիւ, երբ այն մեծ օրուան փոթորիկը պատահի, ով որ վիմին վրայ կեցած չէ, շատ ահաւոր վիճակ պիտի ունենայ:»

—«Այո՛, տէր, ճշմարիտ է այդ խօսքը, շատ անգամ գիշերները երբ հովին և ծովին ալեաց անհղ գոչիւնը կը լսեմ, Տէրոջ դաւաճան վերաբերեալ խօսքերէն ոմանք միտքս կու գան, և կը դողամ:»

—«Եթէ այն յաւիտենական վիմին վրայ հաստատուած ըլլայիք, պատճառ չէիք ունենար դողալու:»

—«Այո՛, բայց ի՞նչ ընեմ չեմ գիտեր:»

—«Եթէ այս տունը և աշտարակը դրուած ըլլար աւազի վրայ, ի՞նչ կ'ընէիք:»

—«Վար կ'առնուի, և վիմի վրայ կը կանգնէի:»

—«Բարի, դուք շատ տարիներէ հետէ ձեր յոյսը դրած էք ձեր բարի գործոց, անսողիւտ կենաց և բարի զգացմանց վրայ, այնպէս չէ:»

—«Այնպէս է:»

—«Աւրդ, բարեկամ, մի յապաղեր, այս ամէնը քակէ, և ըսէ. «Ես Աստուծոյ օտարացեալ, կորուսեալ մեղաւոր եմ, իմ բոլոր

յոյսերս դրած եմ աւաղի վրայ,՝ և սկսէ շինել փոթորկի դէմ դնող հիման, այսինքն Յիսուսի վրայ : Մի միայն դարման չա է, չա իւր կեանքը զոհեց քեզի համար . և եթէ բոլորովին և հաստատութեամբ կը հաւատաս և կ'ապաւնիս անոր, կը հաստատուիս վիմի վրայ :”

—“Քիչ մը հասկցայ :”

—“Նա է հաստատուն, անխախտ և անշարժ հիմն : Վերջին օրուան փոթորիկը պիտի չվնասէ քեզ : Երբ հաստատուիս այն յաւիտեանական վիմին վրայ, կ'ըլլաս բոլորովին ապահով, ինչպէս որ ապահով ես փոթորկէ այս աշտարակին մէջ :”

Երբ վերջացաւ այս խօսակցութիւնը, աղօթք ըրին, և երգելով սա երգը,

Ի վերայ Յիսուսի յեցեալ է
Հաւատքս և յոյսս,
Աւաղք ցրուեալ կորնչին,
Վէմն կը մնայ անշարժ

բաժնուեցանք և անցուցինք գիշերը քաղցր ընով, և կը հաւատամ թէ այն գիշերէն հետէ հաւս հաստատուեցաւ ճշմարիտ վիմին վրայ :



ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ԹԻՄՓԷ ԿԼԶԻԷՆ ԿԸ ՄԵԿՆԻ

Առտու մը օդը անձրևային էր, և մինչ ներսը թիմիէի հետ “գնդակ” կը խաղայինք, հայրս աշտարակէն գոչեց, “Ահա՛, կու գան, Ալիք, եկու տես, ահա՛ կու գան :” “Ո՛վ կու գայ,” հարցուցի : “Թիմիէի մայրը և հայրը կու գան հաւուգ հետ,” պատասխանեց : Իսկոյն տիկին մը պարոնի մը հետ մտաւ, և իսկոյն գիրկն առաւ աղջիկը : Աղջիկն ի սկզբան ամչնալով ետ քաշուեցաւ, բայց երբ տիկինն ըսաւ, “Թիմիէ, աղջիկս, զիս չե՞ս ճանչնար, տես մայրդ եկաւ տեսնել զքեզ,” գնաց ինկաւ տիկնոջ պարանոցը : Վիլիէրս և կինը խորին շնորհակալութեամբ կամեցան վարձատրել զմեզ որ այնպէս խնամ տարած էինք իրենց դստեր : Երեկոյին, երբ նաւը որ այս հիւրերը պիտի տանէր՝ եկաւ քաղաքէն, հաւս տղեկը գիրկն առաւ, “Ո՛հ, ի՛նչ կընէք,” գոչեց, “Ի՛նչպէս պիտի զատուիմ դստրիկէս, թիմիէ մեր աշտարակին վարդն էր : Շատ դժուարին է ինձ որ այս վարդը կ'առնուք մեր ձեռքէն :” Վիլիէրս պատասխանեց, “Ձեզի առաջարկութիւն մը ընեմ, ի՛նչ պատասխան կու տաք :”

—“Ի՛նչ առաջարկութիւն պիտի ընէք :”

—“Կ'ուզեմ ձեր թոռը հետս տանիլ և

դպրոց դնել, և ուսման ընթացքը կատարելէն ետքը, պաշտօնի մը վրայ կարգել տալ զնա, ահա՛ այս է առաջարկութիւնս, ի՞նչ կ'ըսէք:”

—“Ձեմ գիտեր, Ալիքին աղէկ կ'ըլլայ, բայց ես կը յուսայի թէ նա օր մը պիտի յաջորդէր ինձ: Բայց հիմա Ալիքի երթալը շատ տարբերութիւն չընէր, մինչ անոր հայրը ողջ առողջ առ մեզ դարձաւ: Վասն որոյ կ'ընդունիմ ձեր առաջարկութիւնը, թոյլ կու տաք սակայն որ երբեմն մեզի դայ, այնպէս չէ:”

—“Այո՛, պարագայ ժամանակներ կան, և անատեն կրնայ դալ տեսնել զձեզ:”

—“Հնորհակալ ենք, տէր, ձեր այս շնորհքին փոխարէն ի՞նչ կրնանք ընել:”

—“Ինչ կրնաք ընել, ո՛չ, ո՛չ, մենք ձեզի շատ պարտական ենք, շատ շնորհակալ ենք ձեռնէ,” և ժպտելով դարձաւ թիմիէի, “Այնպէս չէ, Լուսիա,” ըսաւ (քանզի աղջկան բուն անունը Լուսիա էր, բայց մայրը շատ սիրելուն, թիմիէ կը կոչէր:) Վերջապէս Վիլիէրս և կինը իրենց խորին շնորհակալութիւնը և խոստումը որ ինծի համար ըրին, դարձեալ կրկնե՞լ ետքը, առին զթիմիէ և նոյն նաւակով դարձան: Որչափ կը մօտենար ժամանակը որ դպրոց պիտի երթայի, այն օրերս զոր անցուցի հաւուս քով՝ աւելի քաղցր կը թուէին ինձ: Յօրմէ հետէ Տէյվիս մեզի այցելութեան

եկաւ, կիրակին սուրբ պահել սովորեցանք, և միշտ մեծ յարգանք և զգուշութեամբ կը քննէինք Սուրբ գիրքը: Մեզի համար հին բաներն անցած էին, և ամէն բան նոր եղած էր:

Այն օրը որ կողիէն մեկնեցայ, մինչ նաւամատուցին վրայ կեցած հրաժարական ողջոյն կու տայինք իրարու, հաւս խօսքն ինծի ուղղելով ըսաւ, “Ալիք, վիմին վրայ հաստատ կեցիր. եթէ յաւիտենական վիմին վրայ կը հաստատուիս, երբէք մի՛ շարժիր անկէ.” այս ըսելով զիս Աստուծոյ յանձնեց:

Այս խօսքը հաւուս վերջին խրատն էր, ուստի երբէք չեմ մոռնար զայն, և պիտի չմոռնամ:

—“ՎԻՄԻ ՎՐԱՅ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ԷՐ:”

Մարտի. Է. 25:

1. Վիմի վրայ յեցեալ է
Փրկութեանս միակ յոյսը,
Եւ է ապաստան իմ հոգւոյս
Տէր Յիսուսի Սուրբ անունը:
Աւագք ցրուեալ կորնչին,
Կը մնայ Գրիստոս վէմն անշարժ:

2. Սաստիկ հովեր կը շնչեն,
Կը մնայ հաստատ Ապաւէնս,
Կ'որոտան փայլակք յարեւելից,
Ոչ կարեն սարսել յաւիտեան:
Աւագք ցրուեալ կորնչին,
Կը մնայ Գրիստոս վէմն անշարժ:

3. Նորա ուխտ և արիւն,
 Շնորհեն նոր կեանք իմ հոգւոյս,
 Երբ ամեն նեցուկ չքանայ,
 Յոյսս միակ կայ և մնայ:
 Աւագք ցրուեալ կորնչին,
 Կը մնայ փրիստոս վէմն անշարժ:
4. Երբ հնչէ ձայն վերջին փողոյն,
 Ապաստարանս պատսպարիմ,
 Ձգեցեալ հանդերձ արդարութեան,
 Երեւիմ առաջի փառաց Գահոյն,
 Աւագք ցրուեալ կորնչին,
 Կը մնայ փրիստոս վէմն անշարժ:
5. Յաշխարհի աստ և յերկինս,
 Դու լե՛ր, ով Տէր, իմ բաժինս,
 Աշխարհ համայն թէ կործանի,
 Ի քեզ մնամ հաստատ և անշարժ:
 Տիեզերք համայն թէ կորնչին,
 Դու լե՛ր ինձ, Տէր, կեանք և հրճուանք:



295

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL1157694

